ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱՅԺԱՐՈՅՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 53 - 54 (16856) ՇԱԲԱԹ 4 ՀՈՒԼԻՍԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՕՐԵՆՍԴԻՐ

ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՐՁԱՎ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 29-ին Վրաստանի խորհրդարանը արտահերթ լիագումար նիստում՝ 117 կողմ ձայներով, երրորդ՝ վերջին ընթերցմամբ, հաստատեց ընտրական համակարգի փոփոխման նպատակով պատրաստված սահմանադրական փոփոխությունները: Փոփոխություններին դեմ է քվեարկել երեք պատգամավոր:

Քվերակությանը չեն մասնակցել «Ազգային շարժում» եւ «Եվրոպական Վրաստան» կուսակցությունները:

Հիշեցնենք, որ հունիսի 21-ին եւ 23-ին կայացած արտահերթ նիստում, Վրաստանի խորհրդարանը առաջին (136 կողմ, 5 դեմ) եւ երկրորդ (115 կողմ, 3 դեմ) ընթերցումներով, հաստատեց սահմանադրական փոփոխությունների օրինանախագիծը: Առաջին ընթերցման քննարկումներին խորհրդարանական մեծամասնության հետ մասնակցեցին նաեւ «Եվրոպական Վրաստան» ընդդիմադիր խմբակցության պատգամավորները, թեպետ հետո նրանք հրաժարվեցին փոփոխությունների քննարկումների մասնակցությունից՝ միանալով ընդդիմադիր մյուս խմբակցություններին, որոնք իրենց մասնակցությունը պայմանավորում էին «Մթավարի արխի» հեռուստաընկերության բաժնետեր Գիորգի Ռուրուայի ազատ արձակման հետ, ով ձերբակալվել էր անցյալ տարվա հունիսի 20-ին ցույցին մասնակցելու եւ իրավապահներին դիմադրություն ցուցաբերելու մեադրանքով:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵՑԻՆ

Հուլիսի 2-ին Վրաստանի խորհրդարանը՝ 94 կողմ եւ 1 դեմ ձայներով, երրորդ ընթերցմամբ, հաստատեց ընտրական օրենսգրքում իրականացվելիք փոփոխությունների փաթեթը: Այն մի շարք փոփոխություններ է նախատեսում ընտրական քարոզարշավի եւ ընտրությունների անցկացման գործընթացներում:

Հաստատված փոփոխությունների համաձայն, քվեարկության օրը քարոզչական գովազդների տեղակայումը արգելվում է ոչ միայն ընտրատեղամասում, այլեւ ընտրատեղամասի շենքից 25 մետր հեռավորության վրա: Բացի այդ, արգելվում է ընտրությունների ընտրացուցակի եւ շենքից 25 մետր հեռավորության վրա ընտրողների տեղաշարժերի խոչընդոտումը: Սույն արգելքը չի առնչվում էկզիպոլի նպատակով իրականացվող գործունեությանը:

Ինչ վերաբերում է վարչական ռեսուրսի օգտագործման կանխմանը, ապա ըստ կատարելիք փոփոխությունների, ընդլայնվում է այն անձանց ցանկը, ում արգելվում է մասնակցություն ցուցաբերել նախընտրական քարոզարշավին: Ըստ փոփոխությունների

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԻՆԳ ՓՈԽԽՈՍՆԱԿ՝ ԻՆՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է

Հաստատված փոփոխությունների համաձայն, Վրաստանի խորհրդարանի փոխնախագահների թիվը կրճատվում է՝ 9-ից դառնալով 5:

Ըստ օրինագծի, խորհրդարանի նախագահի առաջին տեղակալը կրկին կընտրվի խորհրդարանի նախագահի առաջադրմամբ: Ինչ վերաբերում է մնացած չորս փոխնախագահներին, ապա նրանցից երկուսը կընտրվեն խորհրդարանական մեծամասնության առաջադրմամբ, եւ եւս երկուսը՝ ընդդիմության առաջադրմամբ:

Բացի այդ, փոփոխվում է նաեւ խորհրդարանական պաշտոնի որակավորումը: Ըստ կանոնակարգի, խորհրդարանական մեծամասնության ղեկավարի պաշտոնն այլեւս չի լինելու խորհրդարանական պաշտոն, ինչպես եւ խորհրդարանական փոքրամասնության առաջնորդը, քանի որ խորհրդարանական փոքրամասնությունը լուծարվում է: Խորհրդարանական պաշտոնն այլեւս իրենից չի ներկայացնի ժամանակավոր քննչական կամ ժամանակավոր այլ հանձնաժողովի նախագահություն: Ինչ վերաբերում է խորհրդարանական նոր պաշտոններին, ապա դրանք խմբակցության նախագահի տեղակալը եւ նրա առաջին տեղակալն են (դրա գոյության դեպքում):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿԱՏԱՐՈՒՄ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

ՀՈՒԼԻՍԻ 1-Ի՝ ԱՎԵԼԱՑԱՎ 70-Ն ԱՆՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԹՈՇԱԿԸ, ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ, ԻՆՉԵՊՍ ՆԱԵՎ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

«Վրացական երազանքը» կատարում է իր նախընտրական խոստումները: Դեռեւս ընթացիկ տարվա հունվարից, բոլոր կենսաթոշակառուների կենսաթոշակը ավելացվեց 20 լարիով, իսկ հուլիսի 1-ից 30 լարիով ավելացավ 70-ն անց կենսաթոշակառուների թոշակը եւ կազմեց 250 լարի:

Վրաստանի կառավարության որոշմամբ, ավելացած կենսաթոշակ կստանա մոտ 410 հազար թոշակառու:

Բացի այդ, բարձրալեռ շրջաններում բնակվող 70 տարին լրացած թոշակառուների կենսաթոշակը կկազմի 300 լարի՝

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՅԱՄԱՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՊՇՏԱՊ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՉԵՆՔ ԿԱՅԱՑՆԻ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հայտարարությամբ, ցամաքային սահմանների լայնածավալ բացում դեռ չի նախատեսվում:

- Ցամաքային սահմանների բացման կապակցությամբ մենք չենք կարող ու չենք կայացնի հապճեպ որոշումներ: Վրաստանի քաղաքացիների ցամաքային սահմանով շարժվելը, ինչպես նաեւ այն ամենը, ինչ կապված է բեռնափոխադրումների հետ, տեղի են ունենում բացարձակապես առանց որեւէ խափանումների: Վերահսկողությունը շատ արդյունավետ է, սակայն, մենք դեռ չենք նախատեսում լայնածավալ բացել ցամաքային սահմանները,- ասաց Գիորգի Գախարիան:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ

Հուլիսի 2-ին Հայ Առաքելական եկեղեցին նշեց թարգմանիչներ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի եւ Սուրբ Սահակ Պարթեւի տոնը: Օրը նշանավորվեց Թբիլիսիում, ինչպես նաեւ Վրաստանի հայաբնակ շրջաններում:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի նախագահությամբ, Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում կատարվեց Հայոց Մեծերի հոգու խաղաղության հոգեհանգստյան կարգ:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՋԱՎԱԽԵԹԻ

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՈՒՄ

Հուլիսի 2-ին Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսո Ամիրանաշվիլին, Վրաստանի ենթակառույցների փոխնախարար Իլիա Բեգիաշվիլին, Նինոծմինդայի մունիցիպալիտետ կատարած աշխատանքային այցի շրջանակներում, անցկացրին շրջանում իրականացվող ենթակառուցային նախագծերի մոնիթորինգ:

Մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանի, սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանի ուղեկցությամբ, հյուրերը եղան շտապօգնության նոր կայանում եւ ասֆալտապատված փողոցներում:

Ինչպես նշեց փոխնախարարը, Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի հավաքագրած 329 միլիոն լարի գումարից, Նինոծմինդայի մունիցիպալիտետին հատկացվող գումարը կազմում է շուրջ 6 000 000 լարի:

- Ուզում եմ ասել, որ այս մունիցիպալիտետում ճիշտ կառավարում է իրականացվում ենթակառուցվածքային նախագծերի տեսանկյունից,- մեզ հետ զրույցում ասաց Իլիա Բեգիաշվիլին:

Անդրադառնալով առանձին նախագծերի շուրջ տեղի բնակիչների դիտողությունների հարցին՝ փոխնախարարը նշեց, որ իրավիճակը փոխվել է, փոխվում են նաեւ պահանջները, չափորոշիչները, նախագծողները, բայց բացթողումները հնարավոր է շտկել:

(Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԱՁՄԱՆ, ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Ինչպես տեղեկացրել է «Եվրոնյուսը», Եվրամիությունը Վրաստանը ներառել է այն երկրների ցուցակում, որոնց քաղաքացիները կկարողանան մուտք գործել Եվրամիության տարածք սահմանները բացվելուց հետո:

«Վրաստանը «կանաչ գոտու» երկրների ցանկում ընդգրկելը Եվրամիության հետ սերտ գործընկերության եւս մեկ ապացույցն է, կարեւոր ձեռքբերում եւ այն հաջողության ճանաչում, որը Վրաստանը, մեր ժողովուրդն ու իշխանությունն ունեն համավարակի դեմ պայքարի ուղղությամբ»,- այս մասին ասվում է Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հայտարարության մեջ:

Վարչապետը Վրաստանի կառավարության եւ վրաց ժողովրդի անունից երախտագիտություն է հայտնում Եվրամիությանը ճանաչման, վստահության եւ ռազմավարական գործընկերության համար:

Հատկանշական է, որ Եվրամիության ցուցակում Վրաստանի հարեւաններից ներառված է միայն Թուրքիան: Սահմանները բացվելու են նաեւ Ուկրաինայի եւ Չինաստանի քաղաքացիների համար:

Ըստ «Եվրոնյուսի», ցուցակը առաջացրել է հակասություններ, քանի որ այնտեղ չի հայտնվել Ամերիկայի Միացյալ Նահանգները, որը ամենից շատ է տուժել COVID-19-ից: Ցուցակում չեն հայտնվել նաեւ Ռուսաստանը, Բրազիլիան եւ Քաբարը:

ԵԹԵ ՎՐԱՍՏԱՆԸ ԴԻՄԱՆԱ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԲԱՑՄԱՆԸ, ԴԱ ԿԼԻՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Թենգիզ Ցերցվաձեն, գնահատելով Վրաստանում իրավիճակը, հայտարարեց, որ կորոնավիրուսի դեպքերի թվով Վրաստանը շատ երջանիկ է եւ աշխարհում հազվագյուտ բացառություն:

Ըստ նրա, եթե հաջողվի պահպանել այս վիճակը, Վրաստանը աշխարհի համար կդառնա մատնանշվող երկիր:

- Ուր էլ նայեք, կորոնավիրուսով վարակման դեպքերը աճում են: Որոշ երկրներում, հիմնականում՝ Եվրոպայում, անկում է նկատվում, սակայն ոչ այնպես, ինչպես Վրաստանում: Մեր հարեւանության մեջ դեպքերը չեն պակասում, այլ հակառակը:

Ինչ կոլափսի մասին է խոսքը, երբ երկրում գրանցվում է օրական մեկ կամ երկու դեպք: Եթե մեզ հաջողվի պահպանել այս վիճակը, ապա Վրաստանը կլինի օազիս, մատնանշվող երկիր ողջ աշխարհի համար: Բոլորը զարմանում են, որ Վրաստանում դեպքերի թիվը պակասում է այն դեպքում, երբ մեր հարեւան երկրներում աճում է,- ասաց Թենգիզ Ցերցվաձեն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ՎՐԱԺԱԿԱՆ ԵՐԱՁԱՆՔԸ» ԿԱՏԱՐՈՒՄ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հաշվի առնելով, որ «Բարձրալեռ շրջանների զարգացման մասին» օրենքի համաձայն, լեռնային գոտում բնակվող թոշակառուներին տրվում է ամենամսյա լրացուցիչ գումար՝ պետական թոշակի 20 տոկոսի չափով:

2021 թվականի հունվարի 1-ից կներդրվի կենսաթոշակների ինդեքսավորման կարգ, որի համաձայն, յուրաքանչյուր թոշակառուի կենսաթոշակը կավելանա գնաճի ցուցանիշից ոչ պակաս, այսինքն՝ գների աճը ազդեցություն չի ունենա իրական կենսաթոշակի ծավալի վրա, 70 տարին լրացած թոշակառուների գնաճին կավելանա տնտեսական աճի 80 տոկոսը, այսինքն՝ թոշակի ամենամյա աճը կլինի գնաճից բարձր, չնայած գնաճի եւ տնտեսական աճի չափանիշներին, կենսաթոշակը կավելանա ոչ պակաս, քան 20 լարիով, իսկ 70 տարին լրացած անձանցը՝ ոչ պակաս, քան 25 լարիով:

Հուլիսի 1-ից 100 լարիով ավելացավ նաեւ շտապօգնության անձնակազմի եւ գյուղական բժիշկների աշխատավարձը: Բացի այդ, հուլիսի 1-ից 30 լարիով ավելացան առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց եւ երեխաների սոցիալական փաթեթները:

Կառավարության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերը ներառում են նաեւ ներքին գործերի նախարարության աշխատակիցներին:

Հուլիսի 1-ից 125 լարիով ավելացվեց նաեւ ոստիկանների աշխատավարձը: Ընդ որում, գերատեսչության տեղեկատվությամբ, միջոցներ են ձեռնարկվում նախարարության աշխատակիցների կենցաղային եւ սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ ԱՆԸՆԴՄԵՋ ԳՈՐԾԸՆԹԱՑ Է

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ ԹՈՇԱԿԱՌՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի կառավարությունը, հավատարիմ հայտարարած առաջնահերթությունների, կշարունակի ուսուցիչների աշխատավարձի անընդմեջ ավելացման կուրսը:

Իր ամենամյա զեկույցում Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, անդրադառնալով կրթական ոլորտի աշխատակիցների խրախուսման թեմային, հայտարարեց, որ ուսուցիչների աշխատավարձի բարձրացումն ու թոշակառու մանկավարժների դրամական պարգեւների ծրագիրը շարունակական են լինելու:

Ինչ վերաբերում է թոշակառու մանկավարժների միանգամյա դրամական պարգեւներին, նրա հավաստմամբ, այս ծրագիրը եւս անպայման պետք է շարունակվի:

- Հազարավոր թոշակառու «պրակտիկոս» ուսուցիչներ, դրամական պարգեւներ ստանալով, արժանապատիվ ձեւով դուրս եկան համակարգից: Այս ծրագիրը անպայման պետք է շարունակվի, որպեսզի մեր թոշակառու մանկավարժներին հնարավորություն տանք անմիջապես անցնել թոշակի, եւ համակարգը համալրվի նոր, երիտասարդ կադրերով, ովքեր շատ արագ պետք է բարձրացնեն իրենց կարգավիճակը,- նշեց Գիորգի Գախարիան:

300 ԼԱՐԻԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը 388-րդ բանաձեւի համաձայն, կոնկետ քայլեր է ձեռնարկում նոր կորոնավիրուսով (SARS-COV-2) պայմանավորված վարակի (COVID-19) արդյունքում պատճառված վնասը փոխհատուցելու ուղղությամբ, մասնավորապես, վնասի չափերը թեթեւացնելու նպատակով, փոփոխություններ են մտցվել պետական ծրագրերում:

Փոփոխությունների համաձայն, Վրաստանի այն քաղաքացիները, ովքեր ինքնազբաղված են եղել Վրաստանի սահմաններից դուրս, ինչը հաստատվում է 2019 թվականին 60 անգամ կամ/2019 թվականի մարտ ամսից մինչեւ հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում 30-120 օրացուցային օրերի ընթացքում սահմանի հատմամբ, հնարավորություն կունենան Վրաստանի ներքին գործերի նախարարությունից տրված համապատասխան փաստաթղթի գոյության դեպքում գրանցվել փոխհատուցում ստացող անձանց բազայում, Վրաստանի առողջապահության նախարարության գրանցման (https://compensation.moh.gov.ge/) պորտալում ոչ ուշ, քան 2020 թվականի հուլիսի 15-ը:

Հիշեցնենք, որ այսօրվա դրությամբ պետությունից օգնություն է ստացել մոտ 105 հազար ինքնազբաղված անձ: Հունիսի 26-ից ընդլայնվել է փոխհատուցում ստացող շահառուների շրջանակը, եւ այն քաղաքացիները, ովքեր սեզոնային աշխատանքների նպատակով մեկնում էին տարբեր երկրներ, կստանան 300 լարիի օգնություն:

Հուլիսի մեկի դրությամբ, առողջապահության նախարարության կայքէջով գրանցվել է փոխհատուցում ստացող 165 626 ինքնազբաղված: Նրանցից 104 547 անձ ստացել է 300 լարի փոխհատուցում: Փոխանցվել է 31 364 100 լարի:

Ինչ վերաբերում է աշխատողներին, ովքեր տուժել են համավարակի հետեւանքով, 200 լարի քանակությամբ փոխհատուցում է ստացել 125 165 անձ: Գումարը կազմում է 25 033 000 լարի: Այն փոխանցվում են աստիճանաբար:

Խորագիրը պատրաստեց
ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ



ԱՄՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՏՆԱՀԱՐՈՒՄ՝ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՁԵՎՈՎ

Հարավային Կորոլինայում Չարլստոն քաղաքի ժողովարանի համաձայնությամբ, հանվել է ԱՄՆ յոթերորդ փոխնախագահ Ջոն Կոլհունի արձանը: Այս տեղեկատվությունը ներկայացրել է CNN հեռուստաընկերությունը:

Նշենք, որ Ջոն Կոլհունը ծնվել էր Հարավային Կորոլինայում եւ ԱՄՆ-ի երկու նախագահների օրոք զբաղեցրել է փոխնախագահի պաշտոնը: Կոլհունը ամերիկյան հարավային նահանգներում համարվում էր ստրկատիրական քաղաքականության գլխավոր գաղափարախոսը:

Միացյալ Նահանգների ազգային գվարդիայի 400 զինծառայողներ Վաշինգտոնում տեղակայվել են հուշարձանների պահպանության նպատակով: Երկրի ներքին անվտանգության դեպարտամենտի խնդրանքով եւ պաշտպանության նախարարի հրամանագրի հիման վրա, ազգային գվարդիայի զինծառայողները ձեռնամուխ եղան զբոսայգիներում ոստիկանության աշխատակիցների աջակցությանը անվտանգության ապահովման համար: Դոնալդ Թրամփը հրամանագիր է ստորագրել, ըստ որի, ուժեղացվում է հուշարձանների հսկողությունը, եւ պատժամիջոցներ են սահմանվում հուշարձանների ոչնչացման համար:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Եվրամիությունը Ռուսաստանի դեմ հաստատված տնտեսական պատժամիջոցները երկարաձգել է մինչեւ 2021 թվականի հունվարի 21-ը:

Եվրամիության լիդերները Ռուսաստանի հանդեպ տնտեսական պատժամիջոցների երկարաձգման որոշումն ընդունել են հունիսի 19-ին տեղի ունեցած գագաթաժողովին: Առաջնորդների հայտարարությամբ, Մինսկի համաձայնագրով նախատեսված բոլոր պայմանները դեռ կատարված չեն:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊՈՒՏԻՆԸ ՄԻՆՉԵՎ 2036 ԹՎԱԿԱՆԸ ԿՄՆԱ ՆԱԽԱԳԱ՞Հ

Հուլիսի 1-ին Ռուսաստանում անցկացվեց սահմանադրական փոփոխությունների հանաքվե: ՌԴ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, քվեաթերթիկների 100 տոկոսի դիտարկումից հետո, երկրի հիմնական օրենքում փոփոխություններ կատարելուն կողմ է քվեարկել քաղաքացիների 77,92 տոկոսը, դեմ՝ 21,27 տոկոսը: Մասնակցության հայտը կազմել է 67,97 տոկոս:

Սահմանադրական փոփոխությունների տասնյակ փոփոխությունների շարքում առաջարկվում է նաեւ զրոյացնել նախագահության նախորդ բոլոր ժամկետները, ինչը հնարավորություն կտա երկիրն արդեն 20 տարի ղեկավարող Վլադիմիր Պուտինին կրկին առաջադրվել եւ Կրեմլում մնալ մինչեւ 2036 թվականը:

ԱՄՆ

ՄԱՀԱՑԵԼ Է ՍԵՐԳԵՅ ԽՐՈՒՇՉՈՎԸ

ԱՄՆ-ում, 85 տարեկան հասակում, մահացել է Խորհրդային Միության կոմկուսի Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովի որդին՝ պրոֆեսոր Սերգեյ Խրուշչովը: Նա 1991 թվականից ապրում էր Միացյալ Նահանգներում, սառը պատերազմի պատմության վերաբերյալ դասախոսություններ էր կարդում համալսարանում:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԿՀԵՏԱՁԳՎԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ, մասնագիտական կրթություն ստանալ ցանկացողների պարտադիր զինվորական ծառայությունը կհետաձգվի մինչեւ ծրագրի ավարտը:

Նախարարության փոխանցմամբ, արդյունքում երիտասարդները կկարողանան առանց տարկետման ավարտել ուսումը:

Ինչպես հայտարարում են գերատեսչությունում, հենց այդ նպատակով, նախարարությունը «Ռազմական պարտականության եւ զինվորական ծառայության մասին» Վրաստանի օրենքում պատրաստել է փոփոխության նախագիծ, որի համաձայն, մասնագիտական կրթությամբ հետաքրքրված երիտասարդներին հնարավորություն կտրվի ուսումն ավարտել ցանկալի ծրագրով, ձեւավորվել որպես կոնկրետ գործի մասնագետներ, ստանալ համապատասխան որակավորում եւ դրանից հետո անցնել պարտադիր զինվորական ծառայության:

Բացի այդ, նախարարությունում մեկնաբանում են, որ առաջարկված փոփոխությունների հիման վրա ծառայությունը կհետաձգվի միայն մեկ անգամ՝ միայն ծրագրի տեւողության ժամկետով:

USAID-Ի ՅՈԹ ՄԻԼԻՈՆ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՄԲ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալությունը (USAID) Վրաստանում սկսում է բազային կրթության լայնածավալ ծրագիր, որի համար ամերիկյան կողմը հատկացրել է 7 միլիոն ԱՄՆ դոլար:

Վրաստանի կրթության նախարարության տարածած տեղեկատվության համաձայն, նոր ծրագիրն առաջնային է համարում ինտերակտիվ ուսուցումը: Դրա նպատակն է զարգացնել գրագիտությունը, ինչպես նաեւ քննադատական եւ մաթեմատիկական մտածողության հմտությունները, օգնել դպրոցականներին հաջողությամբ լուծել իրենց առջեւ ծառացած մարտահրավերներն ու խնդիրները, որոնց նրանք կբախվեն իրենց կյանքի ընթացքում:

Ավելին, ծրագիրը կենտրոնացած է Վրաստանի բացարձակապես բոլոր ուսումնական հաստատությունների վրա, ներառյալ՝ տարրական մակարդակը: Կարեւոր է նաեւ, որ USAID նախագիծը կնպաստի շարունակական կրթության ոլորտի բարեփոխումներին եւ նոր դպրոցի մոդելի ներդրմանը:

Նշենք, որ ամերիկյան կողմի նախաձեռնությունը քննարկվեց Վրաստանի կրթության նախարար Միխեիլ Չխենկելու, Վրաստանում ԱՄՆ դեսպան Քելլի Դեգնանի եւ Վրաստանում USAID առաքելության տնօրեն Փիթեր Վիբլերի հուլիսի 1-ին կայացած հանդիպմանը:

Ինչպես նշվեց հանդիպմանը, Վրաստանում անցկացվում է լայնածավալ եւ համապարփակ կրթության բարեփոխում: Փորձագետները պատրաստել են բարեփոխումների տաս փաթեթ, որոնք ընդգրկում են բոլոր ուղղությունները: Նախատեսվում է զարգացնել ենթակառուցվածքը, ներդնել նորամուծություններ եւ տեխնոլոգիաներ, բուհերի ֆինանսավորման նոր մոդել:

Բարեփոխումները կտեւեն չորս տարի, որոնց նպատակն է Վրաստանը վերածել կրթական կենտրոնի եւ տարածաշրջանում այն դարձնել առաջատար: Ինչպես նշում են USAID վրացական գրասենյակում, ԱՄՆ կառավարությունը աջակցում է բարեփոխումներին, որոնք վրացի երիտասարդներին տրամադրում է գործիքներ՝ խթանելու ժողովրդավարական, սոցիալական եւ տնտեսական զարգացմանը:



ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԿԱՐԱՆՏԻՆ ՉԵՆ ԱՆՑՆԻ

Ինչպես հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, Գերմանիայում բուժման, ուսուցման եւ աշխատանքի համար մեկնող Վրաստանի քաղաքացիները պարտադիր կարանտին չեն անցնի:

ՆԵՐԿՐՎԵԼՈՒ Է 2 562 ՄԻԼԻԱՐԴ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐ ԳԱԶ

Փոփոխություն է կատարվել 2020 թվականի հաստատված գազի հաշվեկշռում:՝ Վրաստանում գազի մատակարարման կանխատեսվող ծավալը 2,562 միլիարդ խորանարդ մետր է:

Վրաստանը 2,338 միլիարդ խորանարդ մետր գազ, այսինքն՝ ընդհանուր ծավալի 91,2 տոկոսը, կստանա Ադրբեջանից: Ռուսաստանից ակնկալվում է ստանալ 200 միլիոն խորանարդ մետր գազ (7,8 տոկոս), իսկ տեղական արդյունահանման ծավալը 11,223 միլիոն խորանարդ մետր է (0,4 տոկոս):

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՉԻ ԲԱՐՁՐԱՆԱ

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովը կսահմանի «Սոկար Ջորջիա Գազ» բաժնետերերի բնական գազի սակագինը: Գործող սակագնի ժամկետը լրացավ հունիսին:

Ազգային հանձնաժողովի նախագահ Դավիթ Նարմանիայի հայտարարությամբ, ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ շրջաններում սահմանված սակագինը անփոփոխ կմնա եւ 3 տարվա ընթացքում չի փոխվի:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԿԱԶՄԵԼ Է 13,5 ՏՈԿՈՍ

Ազգային վիճակագրության ծառայության տվյալներով, 2020 թվականի մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրական ՀՆԱ-ի անկումը կազմել է 13,5, իսկ 2020 թվականի առաջին հինգ ամիսների միջին ցուցանիշը՝ 5,4 տոկոս:

Վիճակագրության դեպարտամենտի տվյալներով, 2020 թվականի մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, անկում է նկատվել գրեթե բոլոր ոլորտներում:

ՇՀԱՄՈՒՆԱՎԼԵՑՈՒՆ ՍԱՄՍԱԽՈՒՐՈ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍԱԴԱԽԼՈՅԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՎԵԼ Է ՄԱՔՍԱՆԵՆԳԱՅԻՆ ԾԽԱԽՈՏ

Հուլիսի 3-ին «Սադախլո» ավտոմաքսային անցակետում կանխվեց ծխախոտեղենի ապօրինի ներկրման փաստը:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, Հայաստանի քաղաքացի Ա.Ս.-ի մեքենայի ճառագայթային ստուգման արդյունքում հայտնաբերեցին 4 100 գլանակ չհայտագրված առանց ակցիզի ծխախոտ:

Մաքսային օրենսգրքի 168-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, օրենքի խախտման համար Հայաստանի քաղաքացի Ա.Ս-ից առգրավվել է մաքսանենգային ապրանքը եւ, որպես պատժամիջոց, սահմանվել դրամական տուգանք 1000 լարիի չափով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍԿՍՎԵԼ Է ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱԵՐՈՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԸ ԿԴԱՌՆԱ ԱՆՎՃԱՐ

- Մեկնարկում է հողերի համակարգային գրանցման նոր փուլը: Այն առնչվելու է հինգ մունիցիպալիտետների՝ Թեթրիծղարոյի, Գարդաբանիի, Քարելիի, Գորիի եւ Սագարեջոյի վարչական 28 միավորներին: Դա նշանակալի հարց է, քանի որ կկարգավորվի 11 հազար հեկտար հողատարածքի հարցը: Դրա համար ֆինանսավորումն արդեն իրականացվում է,- հայտարարեց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ հողերի գրանցման համար քաղաքացիները տուրք չեն վճարելու:

Հուլիսի 1-ից, Վրաստանի կառավարության կողմից մշակված հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում, հողերի գրանցման համար անհրաժեշտ աերոնկարահանումն անվճար է:

Նշենք, որ 2020 թվականի հունվարից հողատարածքների գրանցման մասին օրենքում գործում է նոր կանոնակարգ, որի համաձայն, հնարավոր է դարձել հողամասերը գրանցել, եթե նույնիսկ դրանց փաստաթղթերը չկան: Սակայն քաղաքապետարանը նախ պետք է նույնականացնի հողատարածքը:

Համաձայն վերջին փոփոխությունների, հնարավոր է դարձել գրանցել հողամասը: Եթե անձը չունի ոչ մի փաստաթուղթ, բայց նա այն ստացել եւ օգտագործում է հողային բարեփոխումների ընթացքում: Եթե անձը ցանկանում է գրանցել հողամասը, բայց չունի փաստաթղթեր, ապա նա պետք է իրականացնի հողի օդային լուսանկարում եւ դիմի պետական ռեեստր: Դրանից հետո, ռեեստրը կսկսի փաստաթղթեր հավաքել արխիվներից:

Հիշեցնենք, որ Վրաստանը հողերի գրանցման պարզեցված ընթացակարգը գործարկել է 2016 թվականի օգոստոսի 1-ից: Այս գործընթացը մի քանի անգամ երկարացվել է, քանի որ շատ չգրանցված հողատարածքներ կան: «Հողատարածքի գրանցման մասին» օրենքում մի քանի անգամ փոփոխություններ են կատարվել եւ մի քանի անգամ ակցիա հայտարարվել:

Հարկ է նշել, որ գյուղատնտեսության ոլորտի սուբսիդավորման համար, Վրաստանի կառավարության հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում, պետական նպաստներից կարող են օգտվել 0,25-10 հեկտար հողատարածք ունեցող ֆերմերները:

Նրանք, ովքեր դեռ չեն գրանցել իրենց հողամասերը, կարող են նաեւ օգտվել պետական սուբսիդավորումից, բայց նրանք կարող են ծրագրին մասնակցելու հայտ ներկայացնել հողը գրանցելուց մեկ ամիս հետո:

Գյուղի զարգացման ծրագիրը միտված է ֆերմերային տնտեսությունների զարգացմանը, որոնք տիրապետում են գրանցված հողամասերի: Հենց հողատարածքի գրանցումն է դառնալու օգնություն ցուցաբերելու հիմնական գործոնը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՕՐԵՆՍԴԻՐ

ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՐՁԱՎ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ի՞ՆՉ ԵՆ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սահմանադրական փոփոխությունների նախագիծը նախատեսում է 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների անցկացումը խառը համակարգով. խորհրդարանում կընտրվի 120 անդամ՝ համամասնական եւ 30 անդամ՝ մեծամասնական ընտրահամակարգով:

Փոփոխությունները նախատեսում են նաեւ, որ համամասնական ընտրությունները կանցկացվեն մեկ տոկոսանոց ընտրաշեմով, ընտրական դաշինքների շեմը կսահմանվի մեկ տոկոսով եւ դաշինքում մտնող կուսակցությունների արտադրյալով:

Սրա առկայության դեպքում, նախագծով չբաշխված մանդատները հավասարապես բաժանվելու են ամենից շատ տեղ ունեցող կուսակցության եւ ընտրադաշինքի վրա: Օրինագծով սահմանվում է նաեւ, որ մինչեւ 2024 թվականը արտահերթ ընտրությունների անցկացման դեպքում, կգործի ներկայացված սահմանադրական օրինագծով սահմանված ժամանակավոր ընտրական համակարգը:

Այսպիսով, խորհրդարանի կողմից սահմանադրական փոփոխությունների հաստատման արդյունքում, Վրաստանում այս տարվա աշնանը կայանալիք խորհրդարանական ընտրություններից հետո, խորհրդարանը կձեւավորվի նոր սկզբունքներով:

Քաղաքական կուսակցությունները խորհրդարանում մանդատ ստանալու համար պետք է հաղթահարեն 1 տոկոսանոց ընտրաշեմը, եթե կուսակցությունները կազմում են ընտրադաշինք, ապա խորհրդարան մուտք գործելու համար պետք է հաղթահարեն իրենց թվի տոկոսային ընտրաշեմը. օրինակ, եթե 3 կուսակցություն կազմում է դաշինք, ապա վերջինս պետք է հավաքի ավելի քան 3 տոկոս ձայն, որպեսզի մանդատ ստանա: Օրինագիծը ենթադրում է 40 տոկոսանոց արգելքի մեխանիզմ, ինչը նշանակում է, որ որեւէ կուսակցություն 2020 թվականի ընտրություններին համամասնական կարգով 40,54 տոկոսից պակաս աջակցություն ստանալու դեպքում, միակուսակցական կառավարություն ձեւավորելու հնարավորություն չի ունենա. կծագի կոալիցիոն կառավարության ձեւավորման անհրաժեշտություն, այսինքն՝ ձայների 40 տոկոսը ստանալու դեպքում, կուսակցությունը չի ստանա մանդատների 50 տոկոսից ավելին, այն է՝ 75 մանդատից ավելի: Հետեւաբար, կուսակցությունն ինքնուրույն չի կարողանա կառավարություն ձեւավորել, եւ անհրաժեշտ կլինի կոալիցիոն կառավարություն ունենալ: Կառավարություն ձեւավորելու համար անհրաժեշտ է նվազագույնը 76 մանդատ: Սահմանադրական փոփոխություններով փոխվեցին նաեւ ընտրատարածքների սահմանները: Օրինանախագծով դյուրինացվում է կուսակցությունների գրանցման կարգը: Ընտրություններին կկարողանա մասնակցել այն կուսակցությունը, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին կներկայացնի 5 հազար ստորագրություն:

Եվս մի հանգամանք. եթե մինչեւ 2024 թվականը Վրաստանում անցկացվեն արտահերթ խորհրդարանական ընտրություններ, ապա կանցկացվեն 2020 թվականին ընդունված 120/30 մոդելով, եւ խորհրդարանը օրինական կհամարվի մինչեւ 2024 թվականը: Օրինակ, եթե 2022 թվականին Վրաստանում արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացվեն, ապա նորընտիր խորհրդարանը 2 տարվա կյանք կունենա:

Նշանակալի է նաեւ այն, որ օրինանախագծով սահմանվում է, թե 2024 թվականի խորհրդարանական ընտրություններն ամբողջությամբ կանցկացվեն համամասնական ընտրակարգով:

«ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵՑԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

փաթեթի, նախընտրական քարոզարշավին մասնակցելու իրավունքից զրկվում են հանրային դպրոցների ուսուցիչները, ծառայական գործառույթներ իրականացնողներին, ինչպես նաեւ հանրային իրավունքի իրավաբանական անձանց ու պետական կամ տեղական ինքնակառավարման կողմից հիմնված ոչ կոմերցիոն իրավաբանական անձանց աշխատակիցներին: Միաժամանակ, ընտրական օրենսգրքում արվել է գրառում, ըստ որի, ընտրություններից երկու ամիս շուտ նախարարություններին եւ պետական գերատեսչություններին արգելվում է իրականացված նախագծերի մասին գովազդային տեսահոլովակների ցուցադրումը:

Փոփոխությունների փաթեթի համաձայն, ընտրությունների երկրորդ փուլը, որը նշանակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, կանցկացվի ընտրությունների օրվանից երեք շաբաթ անց: Եթե երկրորդ փուլի մասնակից ընտրական սուբյեկտներից մեկը կորցնի պասսիվ ընտրական իրավունքը, ապա այդ դեպքում երկրորդ փուլը չի անցկացվի եւ ԿԸՀ-ն հաղթող է ճանաչում ընտրական երկրորդ սուբյեկտին:

Օրինանախագիծը նախատեսում է նաեւ լրատվական քարոզարշավի եւ քաղաքական սուբյեկտների տրված եթերային ժամանակի կարգավորումը: Օրինանախագծի համաձայն, քարոզարշավի համար հեռուստա եւ ռադիոքարոզչության մեկօրյա վճարովի ժամանակը չպետք է գերազանցի դրանց օրական հաղորդման ծավալի 15 տոկոսը, եւ ընտրական ոչ մի սուբյեկտի չպետք է տրվի այդ ժամանակահատվածի մեկ երրորդից ավելի ժամանակ: Ինչ վերաբերում է վճարովի եթերաժամանակի սակագնին, ապա այն ընտրական բոլոր սուբյեկտների համար լինելու է նույնը: Բացի այդ, ընտրություններին մասնակից քաղաքական սուբյեկտները իրավունք չունեն լրատվամիջոցներում միմյանց նկատմամբ տեղադրել գովազդային հայտարարություններ: Բացի այդ, ընտրատեղամասերում, երեքի փոխարեն, լրատվամիջոցները կկարողանան ունենալ երկու ներկայացուցիչ:

Օրինանախագծով նախատեսված են նաեւ մի շարք պատժամիջոցներ: Մասնավորապես, հասարակական կարծիքի հարցման արդյունքների հրապարակման կարգի խախտման համար հեռուստա եւ ռադիոընկերությունները կտուգանվեն 5 հազար, իսկ մյուս լրատվամիջոցները՝ 1500 լարիով:

Իրականացված փոփոխությունների համաձայն, հստակեցվում են ընտրատեղամասերում ընտրահանձնաժողովների անդամների գործառույթները: Մասնավորապես, ընտրատեղամասի հանձնաժողովում ոչ կուսակցական անդամի ընտրությունն իրականացվելու է համապատասխան մարզային ընտրական հանձնաժողովի ոչ կուսակցական անդամների մեծամասնության աջակցությամբ: Անթույլատրելի է դառնում նաեւ տեղամասային ընտրական հանձնաժողովի ոչ կուսակցական այն անդամի ընտրությունը, ով նախորդ ընտրություններում տարբեր մակարդակի ընտրահանձնաժողովներում անդամ է նշանակվել քաղաքական կուսակցության կողմից:

Որոշակի փոփոխություն է նախատեսվում գենդերային քվոտաների հարցով: Մասնավորապես, մինչեւ 2028 թվականը անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցությունները ԿԸՀ նախագահին պետք է ներկայացնեն այնպիսի կուսակցական ցուցակներ, որոնց առաջին քառյակում գոնե մեկը լինելու է այլ սեռի ներկայացուցիչ, իսկ 2028-2032 թվականներին անցկացվող ընտրություններում, կուսակցությունները պարտավոր են ԿԸՀ-ին ներկայացնել կուսակցական ցուցակ, որտեղ յուրաքանչյուր երրորդը կլինի այլ սեռի ներկայացուցիչ:

Հաստատված փոփոխությունների համաձայն, հստակեցվում են նաեւ կուսակցությունների ֆինանսավորման գործընթացը: Այսպես, կուսակցությունը, որը մինչեւ 2028 թվականն անցկացված խորհրդարանական ընտրությունների հաշվով ստանալու է ֆինանսավորում, կստանա 30 տոկոսի լրացուցիչ ֆինանսավորում, եթե նրա կողմից խորհրդարանի վերջին ընտրություններում ներկայացված կուսակցական ցուցակում յուրաքանչյուր եռյակում գոնե մեկը լինի այլ սեռի ներկայացուցիչ: Հավելյալ գումարը ծախսվելու է կուսակցության կանանց կազմակերպության գործունեության վրա: Ինչ վերաբերում է ընտրադաշինքների ֆինանսավորմանը, ապա դաշինքում միավորված կուսակցությունների պետական ֆինանսավորման բաշխման կարգը սահմանվելու է դաշինքի կանոնադրության հիման վրա:

Ըստ փոփոխությունների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու համար, քաղաքական կուսակցությունները պետք է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնեն իրենց կողմնակիցների 5 հազար ստորագրությունները: Նշենք, որ 5 հազար ստորագրությունների ընտրաշեմն իջեցվում է միայն 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների համար: Ստորագրահավաքի շեմը 25-ից 5 հազարի իջեցնելու որոշումը կայացվել էր այս տարի, երկարատեւ խորհրդատվություններից հետո:

Միեւնույն ժամանակ, այն քաղաքական կուսակցությունները, որոնք 2018 թվականի ընտրությունների առաջին փուլում առնվազն 15 հազար ձայն էին ստացել, ազատվում են 5 հազար ստորագրություն հավաքելու պարտավորությունից:

Այսպիսով, ստորագրահավաքի կարգը չի վերաբերում շուրջ 22 կուսակցությունների, 19 որակավորված եւ լրացուցիչ երեք քաղաքական կուսակցությունների, որոնք մասնակցել են նախկին խորհրդարանական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Որակավորված ընտրական սուբյեկտը կուսակցություն է, որը վերջին ընտրություններում ստացել է ընտրողների ձայների առնվազն 3 տոկոսը եւ ֆինանսավորվում է պետական բյուջեից:

Չորակավորված ընտրական սուբյեկտը կուսակցություն է, որը պետությունից սուբսիդավորում չի ստանում:

Փոխվում է նաեւ կուսակցությունների ֆինանսավորման կարգը: Մասնավորապես, կուսակցությունը պետական բյուջեից գումար կստանա առաջին 50 000 իրական ձայնի շրջանակներում ստացած յուրաքանչյուր ձայնի համար 15, իսկ յուրաքանչյուր հաջորդ ձայնի համար՝ 5 լարի:

Վերոնշյալ փոփոխություններից բացի, ընտրական օրենսգիրքը համապատասխանեցվել է Վրաստանի սահմանադրությանը: Մասնավորապես, ըստ իրականացված փոփոխությունների, 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն խառը (120 մանդատ՝ համամասնական եւ 30 մանդատ՝ մեծամասնական) ընտրակարգով, մեկ տոկոսի ընտրաշեմով եւ, այսպես կոչված, 40 տոկոսանոց փակման մեխանիզմով: Միաժամանակ, չբաշխված մանդատները կբաշխվեն ընտրությունների արդյունքներով ձայների մեծամասնությունը ստացած քաղաքական կուսակցությունների եւ ընտրադաշինքների միջեւ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՋԱՎԱԽԵԹԻ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 30-ին Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորները հաստատեցին 2020 թվականի բյուջեի հերթական փոփոխությունները:

Փոփոխությունների համաձայն, մունիցիպալիտետի ծախսերը կրճատվել են 300 հազար լարիով, իսկ ճանապարհների փոսերի նորոգման աշխատանքներից տնտեսված 119 570 լարին օգտագործվել է այլ ենթակառույցային աշխատանքների վրա:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ երեք ամսվա ընթացքում՝ որպես եկամուտ, մունիցիպալիտետի բյուջե չի մտել՝ արժեքի ավելացված հարկի (ԱԱՀ) 119 000 լարին, բանկային տոկոսագումարից՝ 23 000 լարի, խաղային բիզնեսից՝ 150 000 լարի եւ Ախալքալաքիի սպասարկման կենտրոնից՝ 8 000 լարի: Մունիցիպալիտետի ծախսերից սակրեբուլոն հանել է համապատասխան գումարը՝ 300 000 լարին:

Ճանապարհների վերանորոգման աշխատանքներից տնտեսված 119 570 լարին ծրագրվել է ծախսել Ախալքալաքիի Ազատության փողոցի շուրջ 60 մետր ճանապարհահատվածի վերանորոգման (42 920 լարի), Խանդո գյուղի մանկապարտեզի սանհանգույցի կարգավորման (36 301 լարի), Կիրովական եւ Մուրջախեթ գյուղերում մինի մարզադաշտի կառուցման (՝համապատասխանաբար՝ 11 882 լարի եւ 25 353 լարի), Մոդեգամ գյուղի ջրատարի վերականգնման (3114 լարի) համար:

Բացի այդ, մունիցիպալիտետի ղեկավարությունը, ելնելով կենտրոնական իշխանության՝ կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի կապակցությամբ դրամական պարգեւներ չվճարելու մասին կարգադրությունից, մունիցիպալիտետի բյուջեից հանեց 166 600 լարի պարգեւադրամը (քաղաքապետարանի բյուջեից՝ 120 000 լարի, սակրեբուլոյի բյուջեից՝ 40 հազար լարի, մունիցիպալիտետի զինծառայության բաժնի բյուջեից՝ 6 600 լարի):

Մունիցիպալիտետը չեղարկված հայտարարեց «Տավշանկա» մանկապատանեկան ճամբարը՝ խնայելով 40 000 լարի, մարզական լողավազանի ծախսերից խնայվել է 25 000, մարզադպրոցից՝ 13 000, իսկ մանկապարտեզներից՝ 55 400 լարի:

Սակրեբուլոյի պատգամավորները համաձայնեցին գյուղերում քաղաքապետի ներկայացուցիչների եւ մասնագետների 7 ամսվա աշխատավարձը (377 720 լարի), բյուջեի աշխատավարձի հոդվածից տեղափոխել ոչ հաստիքայինի (պայմանագրային) հոդված:

ԵՎԳԵՆՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ախալքալաքի-Նինոծմինդա